ՆՈՐ-ԴԱՐ

№ 29 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 16 Փետրուարի 1901 Ուրբաթ, 16 Փետրուարի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 29

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.: Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ Даръ" կամ Tiflis, Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ:

ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ լրագիրը 1901-ին հրատարակւում է Թիֆլիսում նոյն գիրքով և ծրագրով ամեն օր, բացի տօներին հետևող օրերից:

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, երեք ամսուանը՝ 3 ր. 50 կ., Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կ.:

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ:

Յայտարարութիւնները ընդունւում են և օտար լեզուներով բառը 2 կ., առաջին երեսումը՝ 4 կոպէկ:

Խմբագրատունը գտնւում է Դաւիդովսկայա փողոց, տ. № 5

Պոստով «Նոր-Դար»-ի հասցէն Тифлисъ въ Редакцію „НОРЪ-ДАРЪ" կամ Tiflis (Caucase), Rédaction du journal „Nor-Dar.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրաֆուհի Ուվարովան և հնութիւնները Կովկասում:
Քրոնիկոն.—Լուրեր:
Մեզ գրում են.—Շուշուց: Սղնախից: Բաշտից:
Գ. Պոլսի՞հայ Թերթերից:
Նամակ խմբագրութեան:
Գանձակը հարիւր տարի առաջ և յետոյ:
Թղթակցութիւններ.—Շուշուց: Նամակ Պարսկաստանից, Թաւրիզ:
Քաղաքական.—Մակեդոնիա: Աւստրիա-Ունգարիա: Հարաւային Աֆրիկա:
Հեռագրներ:
Բանասիրական.—Օտար կեանքից:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

ԳՐԱՖՈՒՀԻ ՈՒՎԱՐՈՎԱՆ ԵՒ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

(Նամակ խմբագրութեան)

Մոսկուայի կայսերական հնագիտական ընկերութեան նախագահ՝ գրաֆուհի Պ. Ս. Ուվարովա չուտով, գուցէ այս օրերումս, ժամանելու է Կովկաս, յատկապէս Թիֆլիս, տեղւոյդ թանգարանի զուտ հնագիտական առարկաները նկարագրելու գիտաւորութեամբ: Բնական է, որ այդ ծանր գործը գլուխ բերելու համար պատկառելի հնախօսը մի որոշ ժամանակ կըմնայ Կովկասի մայրաքաղաքում, ուր, ինչպէս յայտնի է ինձ, պակաս չեն հնութիւններ թէ բուն քաղաքում և նրա արուարձաններում ու շրջակայքո մ և թէ մասնաւոր անձանց մօտ: Տարակոյս չկայ, որ հնութիւնների աչքի զարնող առատութիւնը կուլտուրական կեդրոններում առիթ է տուել հնախօսական ընկերութիւններ կազմելու: Այդպիսի կեդրոններից մինն էլ Թիֆլիսն է, որ ուղղութիւն է տալիս Կովկասի և Անդրկովկասի միւս քաղաքներին. և այնտեղ, մի քանի տարի ըրանից առաջ, փորձեր էլ եղան այդ նպատակով, բայց, ստոյգը չգիտեմ, այսպիսի միտք յղացողների անձեռնհասութիւնն էր արդեօք պատճառ, թէ հանգամանքների աննպաստհութիւնը, —գործը իւր սաղմի մէջ անհետացաւ և պըտուղ չբերեց: Այն ինչ հունձը Կովկասում առատ է և հնձողներ էլ կըգըտնուեն, ինչպէս գտնուեցան 1881 թ. Թիֆլիսում գումարուած հ՚ագիտական V-րդ ժողովում: Ս. Պետերբուրգի և Մոսկուայի հնագիտական ընկերութիւններին շատ թանգ է նստում գիտական արշաւանքներ ուղարկել դէպի Կովկաս դրա բազմադարեան հնութիւնները հաւաքելու և ուսումնասիրելու համար. հարկաւոր են շատ նիւթական միջոցներ ու ժամանակ, որ հեշտութեամբ միշտ ձեռք չէ բերւում: Տեղական ոյժերը, մօտ լինելով հնութիւնների աղբիւրին, ծանօթ երկրի տեղագրութեանը և պայմաններին, անհուն ծառայութիւն կարող էին մատուցանել հասարակաց հայրենիքի հնութիւնների ուսումնասիրութեան գործում: Արդէն տարրական ճշմարտութիւն է, որ անաչառ գիտութիւնը *) խտրութիւն չէ անում ազգերի և ցեղերի մէջ, ինչպէս մենք տեսնում ենք Եւրոպայի մայրաքաղաքներում պարբերաբար տեղի ունեցող կոնգրէսներում ա.ստի կարծում եմ, որ ներկայումս, եթէ տեղւոյդ հասարակութեան բանիբուն անձինք, առանց կրօնի և ազգութեան խտրութեան, նորից միտք յղանան հնագիտական ընկերութիւն կազմելու կամ իբրև Մոսկուայի ընկերութեան մի ճիւղ (филіальное отдѣленіе) կամ իբրև ուրոյն ընկերութիւն և գործը գլուխ բերելու համար, օգտուելով գրաֆուհի Ուվարովայի ներկայութիւնից, դիմեն նրա բարձր աջակցութեանը, վստահ եմ, որ նրանք յաջողութիւն կըգտնեն: Գրաֆուհու հասարակական բարձր դիրքը, նրա եռանդն ու ձիրքերն ամենայն սիրտ ակ ցուցահանդէսներ և գիտական ժողովներ կազմակերպելում, մեծ գիտական պաշարն ու հմտութիւնը յայտնի են համայն Ռուսիայում: Ահա նորերումս վերադառնալով Եւրոպայից, ո.ր ուսումնասիրում էր զանազան քաղաքների թանգարանները, նա լոյս ընծայեց մի ահագին երկասիրութիւն՝ «Кавказъ. Матеріалы по Археологія Кавказа. Выпускъ VIII. Москва 1900 г.»: Դա 381 էջերից բաղկացած մի գիրք է in 4°, զարդարած բազմաթիւ նկարներով, որ հեղինակը ժողովել է թէ օտար և թէ ռուսաց յայտնի թանգարաններից: Այդ նկարներից շատերը քաղուած են նաև հանգուցեալ գրաֆ Ուվարովի (իւր ամուսնու) և իւր յատուկ ժողովածուներից: Գրքի սկզբում դրուած է հիւսիսային Կովկասի ընդարձակ աշխարհագրական քարտէզը, յետոյ գալիս է ցանկ նիւթոց և յառաջաբանը: Վերջինս ահա նա ինչ է ասում. «Կովկասի հնախօսութեան նիւթերի IV հատորի յառաջաբանում ես ասացի, թէ իմ ծանօթութիւնը Կովկասի հետ սկսուեց 1879 թուականից: Այդ տարուց սկսուեց իմ մշտական ու յարատև ուսումնասիրութիւնն երկրի գերեզմանատների, որոնց վրայ նոյն տարին և յետոյ աշխատում էին իմ աչքերիս առջև, իմ հանգուցեալ ամուսնու առաջնորդութեամբ և նրա աջակցութեամբ՝ պ. պ. Անտօնովիչ, Բեանշատ, Պոլեակով, Ռուսսով, Օլշևսկի, Ֆելիցին. ապա սրանցից յետոյ գեներալ Նեեռովսկի, պրոֆ. Վիրխօֆ և Շանտր. էլ չեմ յիշում Կոմառովսկուն, որ, երկար ապրելով Կովկասում, շատ է զբաղուել տեղական հնութիւնների ուսումնասիրութեամբ, և անխոնջ ու եղբակցութեանց մէջ մասամբ փոխատտրքական ծերունի Բայէրնին: Գերեզմանների ուսումնասիրութիւնն առաջին տարիներում ինձ համար կայանում էր նրանում, որ ես անդադար ներկայ էի պեղումներին, օրագիր էի պահում և սիստեմատիքական ցուցակ էի կազմում ձեռք բերած իրեղէնների ամուսնուս ղեկավարութեամբ, որ մտադիր էր անձամբ զբաղուել գտնուած նիւթերի մշակութեամբ, տեսնելով դրա մէջ մեծ կարևորութիւն ռուս գիտութեան համար: Գրաֆի մահից յետոյ, ինչպէս յայտնի է, Կովկասի հետազօտութիւնը շարունակւում էր և այդ միջոցին գտնուած են ու քննուած ոչ սակաւ նոր գերեզմաններ, հաւաքուած են ոչ սակաւ նոր նիւթեր, բայց, շարունակելով գրաֆի մահից յետոյ էլ իմ ճանապարհորդութիւնները և պեղումները Կովկասում, ես շատ երկար ժամանակ երեւակայել անգամ չէի կարող, որ ինձ համար հնարաւոր լինի մշակել և հրատարակել հաւաքած նիւթերը, չէի երեւակայում այն պատճառով, որ ես ինձ անձեռնհաս էի համարում այնպիսի ծանր գործին ձեռք զարկելու և դիպուածի էի սպասում ինձնից աւելի արժանաւորին յանձնելու հաւաքած նիւթերը, օրագիրները և իմ անձնական դիտողութիւնները: Բայց տարիներն անցնւ.մ էն. քիչ ժամանակ չէ, որ անցել է ոչ միայն Կովկասում կատարած սիստեմատիքական պեղումներից, այլ և գըրաֆի մահից յետոյ. մօտենում է ծերութիւնը և ես երկիւղ եմ կրում, թէ մի գուցէ հետս գերեզման տանեմ բոլորը, ինչ որ վիճակուեցաւ ինձ տեսնել ու լսել Կովկասի հին գերեզմանների մասին և դարձեալ հաւաքած բոլոր թանկագին նիւթերը թողնել առանց նկարագրելու և անմշակ: Կարծում եմ, որ հրատարակելով այս գործն այնպէս, ինչպէս հասողութիւնս է ներում, բազմաթիւ աղիւսակներով ցինկոգրաֆիաներով, ես, չնայելով իմ տեղեկութիւններիս բոլոր թերութիւններին, այնուամենայնիւ կըծառայեմ գործին և հնարաւորութիւն կըտամ ռուս գիտնականներին, նախ՝ պարզերես հանդիսանալ Եւրոպայի առաջ և գիտական նիւթերի հրատարակութեամբ, որ պատկանում են յատուկ Ռուսիային, բայց մինչև այժմ մշակւում էին օտար գիտնականների շնորհիւ, և երկրորդ՝ օգուտ քաղել դրանից յետագայ երկերի և գիտական եզրակացութիւնների համար, որոնք այնուհետև ա.ելի դիւրին և հնարաւոր կըլինին, երբ ձեռք կըբերուին ուրիշ և սիստեմի վերածած նոր նիւթեր»:

Դրանից յետոյ գրաֆուհին բացում է իւր ընդարձակ ծրագիրը, որտեղից պարզւում է, թէ նա իւր այս հիւսիսային Կովկասի հնութիւնների հրատարակութիւնից յետոյ մտադիր է լոյս ընծայել Սև ծովի շրջանի կամ Կովկասի արեւմտեան եզերքների գերեզմանական հնութիւնները, 2) Դաղստանի, 3) Անդրկովկասի, 4) Կովկասի նախալեռների և դրանց կից դաշտերի. ապա նկարագրելով Օսեթիայի, Տագաուրիայի, Կուրտատիայի, Դիգորիայի հնութիւնները, մի առ մի յիշում է իւր աղբիւրները, հետազօտութիւնների եղանակը և ի մէջ այլոց նկատում է. «Իմ հրատարակութեան մէջ զետեղած բազմաթիւ վայրերի ցինկոգրաֆիական նկարները և առանձին գերեզմանների լուսանկարը գուցէ առիթ տան ոմանց կարծելու, թէ ես քաղել եմ այդ ամենը Շանտրի «Recherches Anthropologiques dans le Caucase» եր-

*) Ոչ այնպիսի գիտութիւնը, որ մեր ժամանակի մարդակերները գործիք են դարձնում իրենց ստոր նպատակների համար:

Մ. Հ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՏԱՐ ԿԵԱՆՔԻՑ

Ճափոնացոց մաքրասիրութիւնն ու նրանց լողարանները և բաղանիքները:—Հրէական երկրագործական գաղութներ:

Սովորաբար արևելեան ազգերը շատ էլ չեն սիրում լողանալ, մարմինը մաքուր պահել: Ամիսներ կանցնին, բայց նրանք բաղանիքի երես չեն տեսնիլ, մինչդեռ մարմնի մաքրութիւնն առողջութեան առաջին պայմաններից մէկն է:

Այդ կողմից զարմանալի հակապատկեր են կազմում ճափոնացիք: Կարելի է ասել՝ այդ նրանց մէջ նոյն իսկ չափազանցութեան է հասցրած: Ճափոնացին օրական 2—3 անգամ կըլողանայ, լողարան (վաննա) կըմտնի. նրանց մէջ ապրող եւրոպացիներն էլ, հետևելով նրանց, միևնոյնն են անում, որովհետև լողարանները խիստ թարմացուցիչ ներգործութիւն ունին մարմնի վրայ: Ամեն մի կարողութեան տէր ճափոնացու տանն անպատճառ պէտք է փուրօրօ կամ տընային լողարան գտնուի: Բայց, չնայելով դրան միայն Տօկիօ քաղաքում 1000-ից աւելի լողարաններ կան, որոնց մէջ օրական 300,000 լողարան է պատրաստւում: Հազիւ թէ երկրիս երեսին գտնուի մի այլ տեղ, ուր այդքան հասարակաց բաղանիքներ ու լողարաններ լինեն: Եւրոպական ամեն մի քայլափոխին կըհանդիպէք լողարան գնացող ճափոնացիների: Լողարանները սովորաբար շատ տաք են լինում, նոյն իսկ R. 30° ից վեր:

Տնային լողարաններում սովորաբար միևնոյն լողարանի մէջ մտնում են տըղամարդիկ, յետոյ կանայք, իսկ վերջը ծառաները: Եւրոպացու համար միևնոյն ջրի մէջ լողանալը շատ տարօրինակ պիտի թուի. բայց ճափոնացու համար դա սովորական երևոյթ է նրա համար, որ նրանք օրական մի քանի անգամ լողանալով բոլորովին մաքուր են լինում:

Տօկիօյի հասարակաց լողարանները 1—2 կոպէկ արժեն: Յաճախորդներն շտապով հանում են շորերը, դարսում են պատի տակ դրած արկղի մէջ և իսկոյն ընկնում են տաք ջուրը: Առանձին լողարաններ կամ լողանալու շորեր ամենևին չկան այնտեղ. նրանք բոլորովին մերկանում են ու այնպէս լողանում: Աւազանի մէջտեղից քաշած է թոկ կամ բամբակի ձող, որն աւազանն երկու մասի է բաժանում, մէկը տղամարդկանց և միւսը կանանց համար. այդ բաժանումն, ի հարկէ, ձևական է միայն: Թէ տղամարդիկ և թէ կանայք առանց միմեանցից քաշուելու լողանում են, ցամաքում, հանւում ու հագնւում մի ընդհանուր բաժնի մէջ: Աւելացնենք, որ լողարանի պատերը շինուած են տախտակից, որոնց ճեղքերն այնքան մեծ են, որ ամեն մի դրսի անցորդ կարող է ազատօրէն դիտել այս տեսարանը: Միևնոյն գեբպով փողոցից կարելի է տեսնել նաև իւր տանը լողացող ճափոնուհուն, որով հետև ընդհանուր առմամբ ճափոնացոց տները բոլորովին այնպէս փակ չեն լինում, ինչպէս եւրոպացոցն է:

Չնայելով որ տղամարդիկ ու կանայք այսպէս առանց քաշուելու մերկանում են իրար մօտ, բայց դարձեալ դա վատ հետևանքներ չէ ունենում: Ճափոնացի կնոջ համար սա մի բոլորովին բնական երևոյթ է և նա ամենևին չէ ամաչում: Կառավարութիւնը եւրոպացոց բարքի ազդեցութեան տակ աշխատում էր երկու սեռի համար ջոկ-ջոկ բաժիններ անել, բայց անաջող: Ասենք դեռ Տօկիօյում դա մասամբ աջողւում է, բայց գաւառներում շարունակւում է նախկին ձևը և կառավարութեան կարգադրութիւնը համարւում է մի անմիտ և անխոհեմ փորձ մասնաւոր կեանքի մէջ խառնուելու:

Երկու սեռերը միատեղ լողանալու սովորութիւնն այնքան բնական երևոյթ է դարձել, որ մինչև անգամ հիւրանոցներում եւրոպացիները քիչ է մնում ու շագնաց լինեն, տեսնելով թէ ինչպէս իրենց լողարանի մէջ եղած միջոցին ճափոնացի կանայք հանւում և մտնում են նոյն լողարանի մէջ: Մի անգամ ճափոնացի ուղեցոյցը մի անգլիացու տանում է Տօկիօյի հասարակաց լողարաններից մէկը. անգլիացին յանկարծ իւր առաջ տեսնում է բոլորովին մերկ կանայք, որ նստած են լինում լողարանի շուրթին: Կանայք նկատելով նրան գլխով նշան են անում, բայց յետոյ լսկսում են քահ քահ ծիծաղել, երբ որ շփոթուած անգլիացին շտապով դուրս է փախչում լողարանից:

Ճափոնիայի մի քանի կողմերում լողարանները դուրսը տների առաջն է դրած լինում և երկու սեռն էլ դրանից օգտւում է նոյնպէս ազատ, որպէս թէ դրանք առանձին սենեակի մէջ զետեղուած լինէին: Լողարանները փայտից են շինուած, քառակուսի և մի այնպիսի մեծութեամբ, որ միայն պպզած կարելի է նստել մէջը: Լողարանը դրած է երկաթէ թերթի վրայ, որը տաքանում է ածուխով. այդ պայմանի մէջ ջուրը մինչև Ցելզիուսի 46° է տաքանում:

Բացի սրանից, ճափոնացիք սովորութիւն ունին ամառներն աւազանոց գնալու, ուր հանքային ջրեր կան: Ամանութիւն, կեանքի պարզութիւն՝ այդ ամառանոցների գլխաւոր յատկութիւնն է: Լողարաններում նոյն մերկութիւնը, նոյն սովորութիւնները:

Մեզ համար անհասկանալի է այս սովորութիւնը. բայց թուրքի համար նոյնքան անհասկանալի է կնոջ և տղամարդու միատեղ ճաշի նստելը, ժամանակ անց կացնելը:

*

Մեզ համար շատ տարօրինակ բան է

կից. բայց այդպիսի ենթադրութիւնը չարաչար սխալ կլինի, որովհետև այս բոլոր նկարները պ. Կազիմիր Օլչևսկին արտահանել է բնութիւնից. իսկ ես և պ. Ճանարն օգտուեցինք նրա տակաւին չհրատարակած օրագրերից»: Բայց այսքանը բաւական է հայ ընթերցողի համար: Գիրքը ձօնուած է գրաֆուհու հանգ. ամուսին գրաֆ Ուվարովի յիշատակին:

Մ. Շովրեան

Մոսկուա, 7 փետր.

ՔՐՈՆԻԿՈՆ

Երեքշաբթի երեկոյ, փետրուարի 13 ին, Տեառնընդառաջի նախատօնակին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ներկայ լինել ժամասացութեանը Զգրաշէն ս. Աստուածածին եկեղեցում:

— Չորեքշաբթի, փետրուարի 14 ին, Տեառնընդառաջի օրը, Վեհափառ Կաթողիկոսը հաճեց ներկայ գտնուել պատարագին ս. Նշան եկեղեցում, իւր հետ ունենալով Թեմիս ս. առաջնորդին, Թիֆլիսում գտնուող կուսակրօն հոգևորականութիւնը և քաղաքիս հոգևորականներից մի քանի հոգի:

— Ներկայումս Բագւումն էլ ժամագրութիւն կայ քահանաների համար ռոճիկ սահմանելու: Այս մասին Բագուի գործակալ Արսէն վարդապետը Նորին Վեհափառութեանն է ուղարկել Բագուի քահանաներին ռոճիկ բաշխելու համար կազմած մի կանոնադրութիւն, որով, իբրև փորձ, ցանկալի է համարւում Բագուի իւրաքանչիւր քահանայի համար նշանակել ամսական առնուազն 200 ր., իսկ իւրաքանչիւր աւագ-քահանայի համար 225 ր. ամսական ռոճիկ:

— Շուտով Քիշնև է մեկնելու Տիրայր վարդապետը՝ այնտեղի էջմիածնապատկան կալուածները կառավարելու պաշտօնով:

— Ներկայումս Թիֆլիսումն է գտնըւում Ալէքսանդրոպոլի փոխանորդ Մատթէոս վարդապետը, որ եկել է այստեղ իւր պաշտօնի մասին ինչ-ինչ հրահանգներ ստանալու Նորին Վեհափառութիւնից:

— «Նով. Օբ.» լրագիրը լսել է, որ Թիֆլիսի Քամոյեանց եկեղեցու տեղ նոր եկեղեցի կառուցանելու ծրագիրը հաստատուած է բարձր իշխանութիւնից այն պայմանով, որ եկեղեցու առաջ, Գիվորցովայա փողոցի վրայ գտնուած եկեղեցապատկան խանութները քանդուեն:

— Ամենամօտիկ ապագայում, ինչպէս հաղորդում է «Ռուսսկ. Վեդ.»-ն, Բագու պիտի ուղարկուի մի յատուկ յանձնաժողով հետազօտելու համար Նաւթահան քերում տեղի ունեցող աշխատանքների կարգերը, նմանապէս և բանուորների բնակարանները, կենցաղը և տնտեսական դրութիւնը: Մտադրութիւն կայ բաւական ռեֆորմներ մտցնելու բանուորների վարձելու և աշխատանքից արձակելու կարգի մէջ:

— Լուսաւորութեան մինիստրութիւնն առաջադրութիւն է անում, որ Մոսկուայի հնագիտական ընկերութեանը նպաստներ յատկացուին հրատարակելու համար Կովկասին և արևմտեան նահանգներին վերաբերեալ հետազօտութիւնները. 1901 թուին պիտի յատկացուի 3000 ր., 1902–1905 թուերին—6000 ական ր. ամեն տարի և 1906 թուին—3000 ր.:

— Պետերբուրգի թերթերը հաղորդում են, որ միջոցների սղութեան պատճառով անհնարին է ճանաչուած կանանց համար գիւղատնտեսական բարձրագոյն դպրոց բանալը. այդ պատճառով խնդիր է յարուցուած կանանց բարձրագոյն դասընթացներին կից հիմնելու գիւղատնտեսական բաժանմունքներ կանանց համար:

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՇՈՒՇՈՒՑ.—Քաղաքիս մահմեդական բնակչութեան բողոքի հիման վրայ, նահանգապետը բեկանեց մեր քաղաքային ընտրութիւնները, և նոր ընտրութիւններ նշանակուեցին փետրուարի 1-ին: Մինչդեռ հայերը քնած, ձայները միացնելու վրայ չէին մտածում, մահմեդականների մէջ մեծ պատրաստութիւններ էին տեսնւում. նրանց գլխաւորները մեժլիսներ էին գումարում և յորդորներ կարդում, որ ընտրողները չբաժանեն իրենց ձայները, մինչև իսկ խնդիրներով և սպառնալիքներով իրենց թաղում խանութ ունեցող հայ «խազիաններին» տրամադրում էին յօգուտ իրենց ձայն տալու: Իսկ հայերից շատերը մինչև անգամ ընտրութեան օրը չէին բարեհաճել քուէարկութեան մասնակցելու, ասելով՝ «Ո՛վ ուզում է թող ընտրուի, մեզ համար մէկ է»: Ձայների առաւելութեամբ հայերից ընտրուեցին 26, իսկ մահմեդականներից 14 հոգի: Հայերից ընտրուած են համարւում Զաւադ-բէկ Իշխանեան, Դանիէլ Ահարոնեան, Մկրտիչ Ամբրումեան, Բախշի-բէկ Ասրիբէկեան, Հայրապետ Ղալամճեան, Աւագ Պետրոսեան, Մովսէս Իգրաշեան, Սարգիս Աղամալեան, Ներսէս Ահարոնեան, Գրիգոր Քալանթարեան, Գրիշ-բէկ Գրիգորեան, Նիկալայ Եսրամիշեան (բժ.), Միքայէլ-բէկ Տէր-Յակոբեան, Համբարձում Տէր-Մարտիրոսեան, Խաչատուր Խաչատրեան, Սարգիսջան բէկ Իշխանեան, Մուսա բէկ Մ. Ղարագեօզեան, Նիկալայ Զուրաբեան, Աստուածատուր Ջանումեան (ճարտարապետ), Յովսէփ բէկ Մելիք-Յովսէփեան, Նիկալայ Օհանեան, Բեհբուդ-բէկ Փիրումեան, Գրիգոր Տէր Միքայէլեան, Սարի Այդինեան, Աղաբէկ Լալաբէկեան և Խաչատուր Ղարաբէկեան: Վերջին 6 հոգու տեղ, որոնք առաջինների համեմատութեամբ քիչ ձայն ունէին ստացած (164–158), քաղաքագլուխը նշանակել է մահմեդականներից 154—148 ձայն ունեցողներին, երկու դաւանութեան իրաւասուների թիւը հաւասարեցնելու համար: Ասում են՝ մահմեդականները յոյս ունենալով, որ հայ «խազիաններից» մի քանիսին իրենց կողմը կորզան, մտադիր են քաղաքագլուխ ընտրելու պաշտօնից արձակուած նախկին գաւառապետ Ասլի-բէկ Ռուստամբէկովին, իսկ քաղաքային խորհուրդը պիտի տեղափոխեն իրենց մասը:

—

ՍՂՆԱԽԻՑ.—Արդէն հաստատուել են մեր քաղաքի համար ընտրուած իրաւասուները, բացի ներկայ քաղաքագլխի օգնական պ. Վ. Ենիկոլոբեանից, որը ցենզ չունէր, որովհետև իւր եղբայրը գրգուած սրանից ու նրանից կալուածքի հաւատարմաթուղթ չէ տուել: Վ. Ենիկոլոբեանը երիտասարդների թեկնածուն էր և հաւանականաբար քաղաքագլուխ կընտրուէր:

— Այստեղ մարդասպանութիւնը սովորական բան է դարձել: Սրանից մի ամիս առաջ մի սղնախեցի սայլապան սպանուեցաւ Լագոդաղ աւանի մօտ: Երկու շաբաթ կլինի, որ մէկին դաշոյնով վիրաւորեցին մեր զինուորատան մօտ, իսկ մի քանի օր առաջ մի կառապան բեռութով վիրաւորում է իւր ընկերոջ խփելով մէջքին. բարեբաղդաբար վրայ է հասնում մեր քաղաքի փոլիցէյր Յ. Խեբումեանը և կապում վէրքը, վիրաւորուածին ազատելով արիւնհոսութիւնից:

—

ՌԱՇՏԻՑ.—Լսում ենք, որ մի խումբ երիտասարդներ մտադիր են մի ներկայացում տալ յօգուտ տեղւոյս դպրոց կառուցանելու ֆոնդի: Այդ ֆոնդն այժմ հասնում է շուրջ 3000 թումանի (6000 ր.):

— Ցաւելով պէտք է նկատենք, որ տեղիս ուսուցիչների մէջ ինչ որ խռովութիւններ են ընկել. սկզբնապատճառը շատ անմիտ բան է եղել: Խիստ ցանկալի է, որ պարոնները յետ կանգնեն իրենց լարուած դրութիւնից և իրենց անձնական կերը զոհաբերեն գործի օգտին:

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

Նպաստից յանձնաժողովն իր նախընթաց օրուան նիստին մէջ նկատողութեան առաւ Ս. Հայրապետին մէկ կոնդակն, որով Ն. Ս. Օծութիւն յանուն որբոց և կարօտելոց հաւաքուած գումարներուն և անոնց ինչ նպատակի յատկացուած ըլլալու մասին մանրամասն տեղեկութիւն տալ կըյանձնարարէ: Յանձնաժողովն յետ խորհրդակցութեան որոշեց մանրամասնօրէն պատրաստել այդ հաշիւները, և ազգ. կեդրոնական վարչութեան կողմէ վաւերացուելէ յետոյ ներկայացնել Ն. Ս. Օծութեան:

— Անգլիական դեսպան սըր Ն. Օ'Քոնոր ազգային պատրիարքարան երթալով շնորհակալութիւն յայտնեց ս. պատրիարքին՝ հանգուցեալ Վիքտորիա թագուհւոյն ի յիշատակ մայրաքաղաքիս բոլոր հայ եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուած ըլլալուն համար: Դեսպանն ընդունուեցաւ պատրիարքարանի դրանէն պատրիարքական փոխանորդ տ. Գաբրիէլ սրբազանի և չորս վարդապետներու կողմէ, ամենքն ալ վեղարաւոր: Սանդուխին գլուխէն դիմաւորեցին դիւանապետ էֆէնդիներն ի գլուխ պատրիարքարանի պաշտօնէութեան: Ս. պատրիարքը դիմաւորեց իր սենեակին դրանը: Դեսպանը մէկ քառորդի չափ ս. պատրիարքին հետ տեսակցելէ յետոյ, միևնոյն մեծարանօք մեկնեցաւ պատրիարքարանէն:

— Երուսաղէմի տ. Յարութիւն ս. պատրիարքն իր թարգմանին ընկերակցութեամբ այցելութիւն տուեր է տեղւոյն անգլիական հիւպատոսին և Վիքտորիա թագուհւոյն մահուան առթիւ ցաւակցութիւն յայտներ է:

— Դիարբէքիրէ հասած գրութիւններ շատ տխուր գոյներով կընկարագրեն տեղւոյն ազգային վարժարանաց վիճակը: Ոչ օրինաւոր հոգաբարձութիւն մընացեր է և ոչ ուսուցիչ: Հրաժարեալ տնօրէնին բացած վարժարանը կըյաճախեն եղեր բարեկեցիկ ծնողաց զաւակները, որով ազգային վարժարանաց եկամուտը բոլորովին խանգարուեր է: Վարժարանին մէջ գործածուած դասագրքերը տարապայման սուղ գիներով կըծախուին. այս բան բոլոր ծնողաց դժգոհութեան պատճառ եղեր է: Կեդրոնական ուսումն. խորհրդոյ ուշադրութիւնը կըհրաւիրեն իրաց այս ցաւալի վիճակին վրայ:

— Նպաստից յանձնաժողովը նկատողութեան առաւ Արաբկիրի առաջնորդ տ. Մուշեղ վրդ. ի մէկ առաջարկութիւնը, որով պատրիարքարանէ նպաստ կըխնդրէր որպէս զի որբոց ապագային ապահովութեան համար տեղւոյն որբանոցին մէջ արհեստներու ճիւղ մը հաստատուի: Յանձնաժողովն որոշեց նախ տեղեկանալ թէ՝ ինչ արհեստներ պիտի ուսուցուին որբոց, թէ ինչ ծախքով կրնայ հոգացուիլ առաջարկուած արհեստանոցն և թէ ինչ կերպով պիտի կրնայ ապահովուիլ որբերու ապագան:

— Հաջընի որբանոցի հոգաբարձութիւնն որբանոցի շէնքն ընդարձակելու համար նպաստ խնդրած ըլլալով, որոշուեցաւ գրել, թէ նպաստից սնտուկի հասոյթները չեն ներեր, որ այդ տեսակ պարագաներու մէջ նպաստ հասցնէ:

— Մարկոս էֆ. Աղաբեկեան կրօնական շաբաթաթերթ մը հրատարակելու արտօնութիւն խնդրած ըլլալով, կրօնական ժողովը որոշեց յառաջիկային խորհրդակցել այդ խնդրոյն նկատմամբ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծապատիւ խմբագիր տէր,

Թոյլ տուէք «Նոր-Դար» ի 12-րդ համարում «Քահանայական ռոճիկի մասին» վերնագրով Փայլակ ստորագրութեամբ ս. Էջմիածնից գրուած յօդուածի առթիւ մի երկու խօսք ասել: Գիւղական քահանաների համար էլ ռոճիկ նշանակելու հարցին հակառակելու ոչինչ չունինք մեր խօսքն այդ մասին առաջարկուած կարգ ու կանոնին է վերաբերում, բայց և այդպէս չի կարելի ուշադրութեան չառնել քահանայական տուրքը գիւղացիներից հաւաքելու մասին խմբագրութեանդ կողմից արուած պարզ նկատողութիւնը:

100 ծուխ կազմող գիւղի ծխատիրոջ հաւաքած տուրքերը (թէ զուտ փող և թէ ցորեն, գարի, բրինձ, իւղ և հաւկիթ) հազիւ թէ կազմեն տարեկան 200 րուբլի: Այժմ այդ ժողովրդի վրայ, որը պետական պարտադիր հարկն անգամ հազիւ է կարողանում վճարել, համեցէք 300—400 րուբլի զուտ փողով քահանայական տուրք նշանակիր և առանց կասկածելու սպասիր, որ նա անտրտունջ տայ այդ տուրքը: Դիցուք թէ այդ տուրքի հաւաքումն աջողուեց. ապա ինչպէս հաշտուենք յօդուածագրի այն որոշման հետ, որով առաջարկում է քահանայական տուրքը «հաւաքել և յանձնել երէցփոխին, որից ամսական կըստանան քահանաները»: Մեր երէցփոխներից շատերը կոպէկ կոպէկով Աստուծոյ տաճարում հաւաքուած փողերը հազարներով են կուլ տալիս և հաշիւ պահանջողին էլ միայն դէմքի արհամարհանքով են պատասխանում, իսկ Փայլակը գիւղական քահանայի համար հաւաքուած տուրքի գանձապետութեան և փողերը իւր բուն նպատակին ծառայեցնելու պաշտօնը յանձնում է նոյն իսկ գիւղական երէցփոխին: Այդ նշանակում է, եթէ չասենք գառը գայլին պահ տալ, գէթ ճնճղուկներից զօրով կուտ խլել և հաւերին յանձնելով յուսալ, որ հաւերն այդ կուտն անվնաս պահելով ժամանակին լիւ տէրերին կը յանձնեն...

Եթէ քահանայական տուրքը գիւղացիներից զուտ փողով հաւաքելը հնարաւոր լինէր, մենք կառաջարկէինք, որ այդ տուրքը, փոխանակ երէցփոխին, յանձնուի վիճակային կոնսիստորիային: Վերջինս, որպէս պաշտօնական հիմնարկութիւն, կարող է տուրքի գումարները պահ տալ արքունի գանձարանում և քահանաներին ռոճիկ վճարելու համար իւրաքան-

---

լսել, որ հրէան էլ երկրագործութեամբ պարապի: Բայց փորձը ցոյց է տալիս, որ երկրագործական դժուարին աշխատանքը մատչելի է նաև այդ տաղանդաւոր, բայց բաղդազուրկ ժողովրդին: Հարաւային Ռուսիայում կան մի քանի հրէական գաղութներ, որոնք զուտ երկրագործական զբաղմունք ունին: Բայց այդպիսի գաղութներ հիմնուած են նաև ուրիշ զանազան երկրներում երբեմն աջող և երբեմն անաջող ելքով:

Այդ երկրագործական գաղութներ հաստատելու գաղափարն առանձին ոյժ և գործադրութիւն գտաւ մանաւանդ անցած դարի 80-ական թուերի սկզբում Ռուսիայի, Ռումինիայի և Աւստրիայի հրէաների մէջ, որն ընդարձակուելով դարձաւ ներկայ սիօնականութիւնը: Ներկայումս հրէաների գլխաւոր ուշադրութիւնը դարձած է իրենց հին հայրենիքի—Պաղեստինի վրայ: Եւ շատերը կարծում են, որ հէնց այդ հանգամանքն է եղել պատճառներից մէկը, որ Արգենտինի հասարակապետութեան մէջ հրէական խոշոր գաղութ հաստատելու գործն անաջողութեան է հանդիպել:

Նոր գործի ձեռնարկութիւնը պատկանում է Ռուսիայի և Ռումինիայի հրէաներին, որոնց ջանքերով 1882 թըւականին հիմնուեցաւ Պաղեստինի երեք գաղութը—Զիխրոն Յակոբը, Ռոշ Պինախը և Ռիշոն Լէ Ցիօնը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ սկզբներում մեծ դժուարութիւններ պէտք է կրէին գաղթականները, քանի որ ոչ նիւթական միջոց ունէին և ոչ էլ գործնական պատրաստութիւն: Երկար ժամանակ նրանք ստիպուած էին մաքառել ամեն տեսակ դժուարութիւնների ու նեղութիւնների դէմ, մինչև որ հռչակաւոր հարուստ և բարեգործ Ռոտշիլդն օգնութեան ձեռք մեկնեց նրանց և հնարաւորութիւն տուաւ գաղութները մի քանի տարուայ ընթացքում օրինակելի մի գործ դարձնելու: Եւ այդ հանգամանքը գրաւիչ ոյժ դարձաւ ուրիշ հրէաների համար ևս, որոնք ամեն կողմից սկսան դէպի Պաղեստին դիմել:

Սովորաբար գաղթականներն իրենց մէջ ընկերութիւններ են կազմում, ընդհանուր միջոցներով հարկաւոր գործիքներ գնում և խումբ խումբ ուղևորւում դէպի Պաղեստին: Իսկ այնպիսի ընկերութիւնները, որոնք նպատակ ունին հին գաղութների զարգացման, իսկ նորերի ծագման նպաստել, կազմւում են համարեա թէ բոլոր երկրներում:

Ներկայումս Պաղեստինում մօտ 25 գաղութ կայ հաստատուած, որոնք 6000 բնակիչ ունին: Անշուշտ այդ թիւն անհամեմատ աւելի կլինէր, եթէ Թիւրքիան գործին արգելք չլինէր: 1891 թուականին թիւրքաց կառավարութիւնը հրաման հանեց արգելելու հրէաների խմբական գաղթը:

Ինչպէս արդէն յիշեցինք, մի ժամանակ հրէաների մէջ ձգտում կար Արգենտինի հասարակապետութեան մէջ հիմնել հրէական գաղութներ: Յայտնի բարեգործ Հիրշը Պարիզում այդ նպատակով հիմնել էր մի ընկերութիւն և նրա տրամադրութեան տակ թողել էր մի խոշոր գումար: Բայց այդ գործը գլուխ չեկաւ, Արգենտինի գաղթողները դադար առան, և հէնց այն ժամանակ էլ որոշել էին բոլոր միջոցներն ու ոյժերը նուիրել Պաղեստինում գաղութներ հաստատելու գործին: Բոլոր նշանաւոր հրէայ ընկերութիւնները՝—անգլիական Սիօնի ընկերութիւնը, Պարիզի գաղթային միութիւնը, գերմանական Եզրաբասի ֆէրայնը և Գալիցիայի երկրագործական Սիօն դաշնակցութիւնը,—միացան և կազմեցին մի զօրեղ ընկերութիւն, որի գործադիր յանձնաժողովը Պարիզումն է:

Ներկայումս այդ ընկերութիւնն գրաւուած է Մախնայիմ գաղութը կազմակերպելով, որ հիմնուած էր Գալիցիայի դաշնակցութեան ձեռքով: Որպէս զի թիւրքաց արգելքից խոյս տան, սկզբում հաստատել էին 20 ընտանիքից բաղկացած գաղութ՝ ծախսելով 15 000 րուբլի: Նախապէս գնել էին մի հողաբաժին և թիւրքաց կառավարութիւնից թոյլտուութիւն խնդրել հարկաւոր չափով բնակարաններ կառուցանելու: Հարկաւոր գումարը մասամբ ստորագրութեամբ էր հաւաքուած և մասամբ գոյութիւն ունեցող յանձնաժողովների օժանդակութեամբ:

Մախնայիմ գաղութն ունի 728 դեսեատին հող և ընկած է մի հրաշալի տեղ Հերմոնի սարի ստորոտում: Հայֆֆի կայարանից 12 ժամուայ ճանապարհ է մինչև այդ գաղութը: Գաղութի կառավարիչն է Բլումբերգ, որ կրթուած երկրաբան է և յայտնի գրող: Նրա հետ է նաև Ռոզիօ, որ երկրաբան է և Եաֆֆայի հրէից երկրաբանական (ագրոնոմ) դպրոցի ամենալաւ աշակերտներից մէկը: Գաղթականները Գալիցիայից դուրս եկած հրէաներ են և նրանց մէջ է նաև բժիշկ Բարտաշ, որ երկրագործ է դարձել:

Անցեալ տարի հրէական գաղութներն էր այցելել Պաղեստինի յայտնի ուսումնասիրող գեներալ Վիլսոնը, որ զարմացած էր մնացել գաղութների բարգաւաճ վիճակը տեսնելով:

Թէպէտ մենք անձամբ չենք հաւատում, որ հրէական գաղութները կըկարողանան այնքան բազմանալ, որ ծայրայեղ սիօնիստների քաղաքական նպատակներն իրագործեն, բայց չենք կասկածում, որ բազմաթիւ բաղդազուրկ հրէաներ, որոնք առաջ քաղաքներում ու գիւղերում պրոլետարիատ էին կազմում, կարող կլինեին մի կտոր հողի տէր դառնալ և արդար վաստակով ձեռք բերել իրենց հացը:

Միհրան

չիւր ամսավերջում ստանալ ու բաժանել քահանաներին։

Մի երկու խօսք էլ երէցփոխների խնամատարութեանը, աւելի պարզն ասած՝ տրամադրութեանը յանձնուած եկեղեցապատկան փողերի մասին։ Լաւ կլինէր, որ մեր հոգևոր իշխանութիւնը եկեղեցապատկան բոլոր գումարներն առնէր երէցփոխների ձեռքից և դնէր արքունի բանկը, «ուր ո՛չ գող մերձենայ և ո՛չ ցեց ապականէ»։

Յ. Ուզբաշեան

Սալեան, 1 փետր.

ԳԱՆՁԱԿԸ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՒ ՅԵՏՈՅ

—

Միլիօնաւոր մարդկանց հետ մենք էլ մուտ գործեցինք քսաներորդ դարը։ Ի՛նչ կբերէ մարդկութեանն այս նոր հարիւրամեակը, ի՛նչ փոփոխութիւններ կը մտցնէ նա աշխարհի մէջ ընդհանրապէս և Գանձակում մասնաւորապէս՝—այդ ապագայի գործ է. թող այդ փոփոխութիւններից առաջացած բարիքները մեր յետնորդները վայելեն։ Բայց մենք յետ դառնանք և մի փոքր ակնարկ գցենք անցեալի վրայ ու տեսնենք, թէ Գանձակն ինչ է եղել անցեալ դարում և ինչ դրութեան մէջ է ոտ կոխում 20-րդ դարը։ Մենք միտք չունինք շատ հեռուն գնալու. այդ թողունք աւելի ձեռնհաս մարդկանց ու պատմաբաններին և սահմանափակենք մեր տեսութիւնն այն ժամանակամիջոցով, երբ Գանձակը մնաց ռուսաց տիրապետութեան տակ։

Այդ պատմական դէպքը տեղի ունեցաւ անցեալ դարի 26 թուականին, այսինքն՝ 1826 թուին, երբ ռուսաց զօրքերի առաջ ընկճուեց պարսից գոռոզ Ջաւադ խանը, և Գանձակն ընդ միշտ ազատուեց պարսիկների ու նրանց խաների բռնապետութիւնից։ Այսպիսով աւանելիններորդ դարը մեր քաղաքի պատմութեան մէջ մեծ տեղ պէտք է բռնի։ Այն օրից մինչև այսօր անցել է ընդամենը 74 տարի, մօտ ³/₄ դար, որի ընթացքում Գանձակը հետզհետէ աշխատել է թօթափել իւր վրայից պարսկական-խաւար կեանքի փոշին։

Մի ակնարկ գցելով Գանձակի վրայ, կտեսնենք, որ այս քաղաքը բաւականին կերպարանափոխուել է. Նախկին բերդն իւր «չինական» պարիսպներով, որոնց վրայ էր դրել իւր վերջին յոյսը Ջաւադ խանը և ուր ապրում էր նա իւր հողակոյտ ապարանքում, այժմ խորտակուած է իսպառ և նրա տեղը բռնել է քաղաքի ամենագեղեցիկ մասը, նոր —եւրոպական ճաշակով կառուցուած շինութիւններով ու կանոնաւոր փողոցներով։ Հին բերդից մնացել է միայն մի փոքր հողակոյտ, մի կտոր պատ, և նրա մօտ՝ յայտնի հերոս Պաալեարևսկու արձանը։ Ցայտնի «խանի բաղը» իւր բազմաթիւ չինարիներով, որոնց ճիւղերի վրայ քիչ մարդիկ չեն իրենց հոգին փչել՝ մահուան պատժի ենթարկուելով բռնահաճ խանի հրամանով, այժմ վերափոխուել է խաղողի գեղեցիկ այգու, որից ստացուած և հայի ձեռքով պատրաստուած գինին թուրքն էլ է «անուշ անում»։ Հին ձեւի տների տեղ, որոնց մէջ նահապետական կեանքով ապրելիս են եղել մեծ-մեծ ընտանիքներ բազմաթիւ անդամներով, այժմ կառուցուած են մեծ-մեծ երկու և երեք յարկանի տներ։ Նեղ, ծուռ ու մուռ փողոցների տեղ այժմ բացուել և բացւում են լայն կանոնաւոր փողոցներ։ Քաղաքային Վարանցովեան այգին, որն առաջները լոթիների քէֆ անելու տեղ է եղել, այժմ բարեկարգուած է և զբօսանքի տեղ է ծառայում նաև ինտելիգենտ մարդկանց համար։ Բարձրակատար և ստուերախիտ չինարիներով պատած հաշտկաւոր շուկան, ուր անհոգ Ջաւադ խանն իւր զուարճութեան համար անդադար «ջիրիդներ» է խաղալիս եղել, այժմ մի շարք խանութներով երկու մասի է բաժանուած, որի առաջին մասում գեղեցիկ սկուէր է շինուած իւր ջրվէժով։ Պարսկական մզկիթի տեղ այժմ կառուցուած է ռուսաց մի լաւ կոկլիկ եկեղեցի։ Զանազան քարվանսարաների և «չայչիխաների» տեղ այժմ ունինք բաւականին լաւ հիւրանոցներ։ Հայոց, հին փլատակ «յաջորդարանի» տեղ, հոգևոր կառավարութիւնը և յաջորդը մնում են հոյակապ երկյարկանի շինութեան մէջ (թէպէտև այս փոփոխութիւնից ոչ մի օգուտ չկայ, քանի կառավարութեան գործերը, բարքերն ու վարքերն աւելի ու աւելի են վատանում. իսկ հոգևորականութիւնը հօ ամենքդ գիտէք...)։ Հռչակաւոր «Ծովի», «Ակոբ», «Մագթագ» և նման «վարժապետների» ուսումնարանների տեղ, ուր աշակերտները ջուր կրելուց և «բուրդ գզելուց» զատ ոչինչ չէին սովորում, այժմ ունինք կանոնաւոր դպրոցներ, ուր նոր սերունդը կանոնաւոր ուսումն է ստանում։ Շատ առաջ քաղաքային գործերը վարում էին նախկին պոլիցիականները, որոնք այնպէս են պահպանել քաղաքի շահերը, ինչպէս գայլը կըպահպանէ գառանը։ Երևի, Գանձակում դեռ յիշողներ կան շատերից այն մէկ դէպքը, երբ հասարակ ոստիկանի մէկը քաղաքի մի կտոր հողը ծախել էր մի գլուխ շաքարով...։ Այժմ այս ամենի փոխարէն ունինք կանոնաւոր քաղաքային վարչութիւն, որը խնամք է տանում քաղաքի վրայ և պահպանում նրա շահերը։

Մեր նիստ ու կացն այժմ նոյնպէս փոփոխութեան է ենթարկուած։ Հասարակ, տեղական հագուստը տեղի է տուել եւրոպականին. «մօդ»-ին հետևում են ամենքն էլ, հարուստը թէ աղքատը, զարգացածը թէ տգէտը հաւասարապէս։ «Վերմակի չափ ոտը մեկնել» գեղեցիկ խօսքերն այժմ գոյութիւն չունին մեզ համար, թէկուզ դրա հետևանքը լինի «վեր առ և պարտ եմ» ը։ Հասարակ ճրագուի մո՛ը տեղի է տուել նաւթին, խաւարը—լոյսին, բայց մենք բարքով ու վարքով չեմ կարծում, որ այնքան էլ լուսաւորուած լինինք։ Այս ապացուցանող փաստեր կարող ենք գտնել նոտարների ու դատարանների գործերի մէջ և այլ շատ բաների, որոնց մասին առաջներն էլ խօսել ենք և կրկնելն աւելորդ է։ Առաջուայ «դալլաքների» ու «հեքիմների» տեղ այժմ առաջ են եկել կանոնաւոր ուսում և կրթութիւն առած գիտնական բժիշկներ, որոնց ձեռքի տակ մարդիկ աւելի կանոնաւոր կերպով են... հոգին աւանդում, համաձայն գիտութեան պահանջների։

Հա՛, մոռացայ. առաջուայ «արաբա»-ների տեղ այժմ մեր փողոցներում շրջում են կառքեր, հանրակառքեր, ձիաքարշ երկաթուղու վագոններ և այլն։ Շատ բան կայ դեռ ասելու բայց բոլորի համար երկարօրէն խօսելը մեզ շատ հեռուն կը տանէ։

Սակայն դեռ որքան բան է մնում մեզ անելու, մեր քաղաքը փոքր ի շատէ բարեկարգ դրութեան մէջ դնելու համար։ Անցած դարում կատարուած գործերի շարունակութիւնը և ուրիշ գործերի լուծումն մնում է ներկայ 20 րդ դարին, որից մենք իրաւունք ունինք շատ բան սպասելու։

Երանի, ի հարկէ, մեր այն յետնորդներին, որոնք բաղդ կունենան մի այսպիսի տեսութիւն անել 21-րդ դարի սկզբում, այսինքն 2001 թուականին։ Շատ հաւանական է, մեր քաղաքն այն ժամանակ աւելի բարեկարգ ու երջանիկ լինի։ Մենք այդ չենք տեսնիլ. բայց ցանկանք նրան կատարեալ բարեկարգութիւն, բարգաւաճումն ու հարստութիւն, մի բան, առանց որի աշխարհում 20 րդ դարը չէ, որ 25 րդն էլ գայ, ապրիլ չի լինիլ...։ Միևնոյն ժամանակ ցանկանք.

1) Մեր ժողովրդին—թմրութիւնից սթափումն, համերաշխութիւն և աշխատասիրութիւն.

2) Մեր երիտասարդներին—եռանդ ու գործունէութիւն.

3) Մեր օրիորդներին—քիչ կոկետութիւն, շատ պարզութիւն, համեստութիւն ու ինքնաշխատութիւն.

4, Մեր կանանց - փողոցներում ի զուր պտտելու և բամբասանքներով զբաղուելու տեղ՝ երեխանց կրթութեամբ պարապելու ախորժակ.

5) Երիտասարդ վաճառականներին —կատարեալ աջողութիւն «չոտս», «տրիկտա», «բակարա» և այլ թեթև թղթախաղերում.

6) Վաշխառու վաճառականներին - 50 100 150 % եւ զատ ինչ որ կուզեն՝ այն...

7) Բժիշկներին - գութ դէպի հիւանդները և մարդասիրութիւն.

8) Մեր միակ դեղատանը — ո՛րքան կարելի է շատ հին դեղեր այստեղ սպառցնելու համար և ո՛րքան կարելի է հսկողութիւնից հեռու...

9) Քաղաքային վարչութեանը—աւելի ու աւելի եռանդ, քիչ ձևականութիւն, շատ գործունէութիւն.

10)Վարչութեան անդամներին—մի-մի «սոննի պարաշոկ» (քնեցուցիչ փոշի) անուշ քնելու համար.

11) Իրաւաստներին—... գոնէ քաղաքավարութիւն.

12) Տղայոց պրոգիմնազիոնի հայ աշակերտներին— երկնքից մի հատ կրօնուսոյց խեղճ, երկրից (այսինքն հոգևոր իշխանութիւնից) յոյսերդ կտրեցէք...

13) Մեր հոգևոր կառավարութեանը և նրա կառավարչին մի քիչ «Բրոունի Սեկարի» հեղուկ փոքր ինչ կենդանութիւն ստանալու համար և մի քիչ «Իեռնտգեն ճառագայթներից»՝ այն ամենը տեսնելու համար, որ հասարակ աչքով չեն ուզում տեսնել...

14) Մեր քահանաներին.—միթէ՞ յոյս ունիք այժմեան դրութեամբ հասնել և միւս տարին... ներեցէք, դարին...

15) Մեր եկեղեցիների խաչվառներին, քշոցներին ու քահանայոց շուրջառներին —վերանորոգութիւն, թէ չէ՝ ամօթ է այդ ցնցոտիները...

16) Էջմիածնապատկան այգուն - աջող մրցումն քո «խնամողի» հետ, թէ չէ՝ մի գեղեցիկ օր կարող ես «ուղտ դառնալու» տեղ, ծիտ դառնալ ու թռչել...!?!

Նորաշէնցի

Գանձակ, 1 փետր.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ՇՈՒՇԻ, 10 փետրուարի — Քսաներորդ դարը ոչ մի նորութիւն չբերեց մեզ համար, թէև մեր նորամոլներն աշխարհ դղրդեցրին իրենց գոռում գոչումներով։ Հասարակական կեանքն իսպառ մեռած է մեզանում։ Եթէ չլինէին այս տարուայ դպրոցական մի քանի հանդէսները Շուշին կատարելապէս գրկուած պէտք է լինէր որ և իցէ հասարակական երևոյթից։ Բայց ե՛կ տես, որ այդ հանդէսներն էլ դուր չեն գալիս բացասական ուղղութեան օրգանների մի մոլեռանդ աշխատակցի։ Հոգւով և մարմնով կարճատես մարդիկ վրդովւում են, տեսնելով դպրանոցի աջողութիւնը (չէ՞ որ կուսակցական շահերին հակառակ է), փրփուրը բերանին այնպիսի անմիտ սրախօսութիւնների են դիմում, որ Պարիզի հին Մուլէնների և Մարանդի սրախօս թուրքերի նախանձը կարող է շարժել (երևի Համբարձում Առաքելեանից են սովորել)։

Ուրախութեամբ լսեցինք, որ թեմ. դպր. ուսուցչական խումբը թոյլտւութիւն է ստացել մի ներկայացումն տալու, յօգուտ դպ. աղքատ աշակերտների, բայց ե՛կ տես, որ մեր քաղաքը զարդարող անպարծ մի քանի ինտելիգենտականները, դարձեալ վերյիշեալ ազատամտական քամիներից ներշնչուած, մասնակցելու տուած խոստումը յետ են վերցնում, ասելով. «Չենք կարող, որով հետև խաղացող վարժապետները նորդարականներ են»։ Ձեզ ենք հարցնում, համեստափայլ օրիորդներ, այդ ազնիւ վարմունք է. միթէ կարելի է խաղալ մի հիմնարկութեան պատուի հետ. ոչ որք ձեզ չէր մեղադրիլ, եթէ սկզբից խօսք չտայիք։ Միթէ պատառոտուն աշակերտների օգնութիւնը կապ ունի կուսակցութեան հետ. չէ՞ որ այդ սկզբունքը դուք էք հրապարակ հանում, երբ խօսք է լինում կաթոլիկ հայերի և հայերի մասին. չէ՞ որ դուք էք այդպիսի խնդիրները փողի ծայր դրած փչում Չիլի ինկերից նոր փղշտացիներից սկսած մինչև Շուշու թոփխանայի յետին պրոպագանդիստը։ Թո՛ղ, սիրելի ընթերցող, Էջմիածնի ս. հայրերը որքան կուզեն մխիթարեանների հետ իրար գլուխ կրծեն այդ խնդրի լուծման համար, մեր քաղաքի սիգաճեմ օրիորդներն արդէն իրենց ազնիւ վարմունքով գործնականապէս լուծումն տուին այդ կնճռոտ խնդրին։ (Հայր տեսուչ, խնդրեմ իմ 15 րուբլին էլ յետ տուէք, ես նորդարական չեմ. դու ձեզ չէի ճանաչում, որ այդ փողը տուի յօգուտ աղքատ աշակերտների)։

Հրաշագործ բժիշկն էլ չի երևում. չգիտեմ այստե՞ղ է, թէ չէ. միայն չտապում եմ արձանագրել նրա հրաշքների արդիւնքը, որ կոյրերը կրկին առաջնորդով են ման գալիս, կաղերը փայտով, անդամալոյծները տանն են ընկած։

Օրիոն

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցութիւն)

—

ԹԱՒՐԻԶ, 5 փետրուարի - Պարսկաստանի քաղաքական հորիզոնի վրայ կամաց-կամաց կուտակւում են փոթորկալից ամպեր։ Ամենքը սրտատրոփ սպասում են՝ «նովրուզ բայրամին» (պարսիկների նոր տարուն)։ Ուլամաներն իրենց ինտրիգներն այժմւանից սկսել են յարել կառավարութեան դէմ։ Ամբոխը վերջին ծայրայեղութեան հասած, լըքեալ, վիրաւոր սրտով կորցրել է իւր հաւատարմութեան զգացմունքը դէպի ուլամաները. ժողովուրդը մասամբ հասկացել է, որ իրեն այդ վիճակին հասցնողն անկուշտ հոգևորականութիւնն է, և այդ է պատճառը, որ զզւանքով և ատելութեամբ է նայում իւր այդ կեղեքիչների վրայ։ Բայց ուլամաները դըրանից չեն յուսահատւում նրանք աշխատում են նորից զարթեցնել մոլեռանդութեան քնած ձայնը և, ամբոխին խաղալիք դարձրած իրենց ձեռքում, կամենում են կեանքի և մահու կռիւ մղել կառավարութեան դէմ, որն ուզում է խլել նրանց բոլոր իրաւունքները, արգելել անվերջ կողոպտումները։ Եւ ուլամաները, իրենց «իրաւունքները» պաշտպանելու համար, միջոցների մէջ խտրութիւն են դնում։

Այն օրուանից, երբ լուր տարածուեց, թէ շահը գիւղերը յանձնել է բեյգիացիներին և նովրուզ բայրամից սկսած գիւղատէրերն իրաւունք չպիտի ունենան գիւղացիներից հարկ առնելու և կալի ժամանակ տասանորդ, այլ այդ տասանորդը պիտի ստանան կառավարութեան գանձարանից,—այդ օրուանից գիւղատէրերն ահ ու սարսափի մէջ են ընկել, որովհետև պիտի զրկուեն իրենց կթի կովերից։ Այդ պատճառով այժմեանից սկսել են շահի այդ իմաստուն կարգադրութեան դէմ միջոցներ ծրագրել։ Թեհրանում մի աչքի ընկնող մոլլա մզկիթի ամբիոնից ամբոխին սաստիկ գրգռել է և յետոյ դուրս է եկել մզկիթից. ամբոխն սկսել է հետևել նրան։ Ճանապարհին չորս հրէայի աներ կողոպտելով անցնում են և իրենց քայլերը սարգի մէյդանից ուղղում են դէպի կառավարութեան արքը (գինւարանը), որ կողոպտեն. այդտեղ վրայ են հասնում զինուորներ, շատ են աշխատում ցրուել ամբոխին բայց չի յաջողւում։ Կառավարութիւնը հրամայում է ընդդիմացողին հրացանազարկ անել։ Սկսւում է մի արիւնահեղ կռիւ, որի միջոցին ամբոխից շատերն են կոտորւում իսկ մնացածները փախչում են։ Գրգռող մոլլային տեղն ու տեղը ձերբակալում են, բայց մինչև օրս էլ յայտնի չէ, թէ ինչ են արել նրան. շատ հաւանական է, որ խեղդամահ արած լինեն։ Այդ ցոյցից անմիջապէս յետոյ հետևեալ բարձրաստիճան անձերին աքսորում են Խորասան (պարսից ուխտատեղին)։ Աքսորում են՝ Մուխտարը Սալթանին (սադրազամի քրոջ ամուսինը), Մազինը Դովլային, Նազիմը Սալթանին (շահի անձնական ծառայութիւն, որին շահը շատ էր սիրում և հետը տարել էր Եւրոպա)։ Դրանցից բացի, աքսորուած է շահի անձնական բժիշկ Հաքիմ Մուլքը, և նրա ահագին կարողութիւնը, որը մի միլիոնից աւելի է, յարքունիս է գրաւուած։

Այս դէպքը տեղիս հոգևորականներին էլ մի քիչ շարժեց։ Սրանից չորս օր առաջ Միրզա-Հասան-Ալիի (Մուշտէյիդի) դրանը հետևեալ յայտարարութիւնն էր փակցրած. «Մեր շահը եւրոպականացել է և եւրոպական նոր օրէնքներ է ուզում մտցնել մեր երկիրը։ Մենք ձեզ ենք դիմում, որ այդ բանի առաջն առնէք. հակառակ դէպքում մենք գիտենք, թէ ինչպէս կըվարուենք թէ ձեզ և թէ կառավարութեան հետ»։

Սա մի պարզ ինտրիգ է, որ ուլամաները սարքել էին ամբոխին գրգռելու համար. բայց Թաւրիզի ժողովուրդը Թեհրանի ամբոխի պէս մոլեռանդ չըգտնուեց. նա արհամարհանքով ընդունեց հոգևորականների այդ արարքը, որովհետև արհեստաւոր, մշակ և աղքատ դասակարգն աւելի ուրախ է, որ պիտի ազատուի վերջապէս այդ մարդակեր գոյլերի ձեռքից, որոնք եօթն ամբողջ տարիներ արհեստական սովով վերջին ծայրայեղութեան են հասցրել իրեն։ Այսպէս թէ այնպէս, հոգևորականութիւնը Պարսկաստանում հանգիստ մնալու չէ և, ըստ երևոյթին, նրան որ ցոյցեր է պատրաստում։ Սակայն կառավարութիւնն ամեն միջոց ձեռք է առել այդ ցոյցերն իրենց իսկ սաղմի մէջ խեղդելու։

Charles

ԲԱՂԱՔԱԿԱՆ

—

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Ուսքիւբից «Voss. Zeit.»-ին հաղորդում են փետրուարի 17-ից (ն. տ.). «Բուլղար մակեդոնական կոմիտետի անդամներն երեկ ծանր վէրքեր հասցրին տեղական սերբ ծխատէր քահանային այն րոպէին, երբ նա ռուսաց հիւպատոսարանից գնում էր տեղական վալու բնակարանը։ Վերջին ժամանակս Կոսովոյի վիլայէթում ընդհանուր առմամբ սպանել են 21 սերբ և վիրաւորել են 50 սերբ։ Այս պատճառով բնակչութեան մէջ մեծ կատաղութիւն է տիրում։»

— Թուրք «Սերվէթ» լրագրին Սալոնիկից գրում են, որ այնտեղ ձերբակալուած է Զաղանով անունով մի բուլղար։ Նրա մօտ գտնուած են Մակեդոնական կոմիտետի յեղափոխական կոչեր։

—

ԱՒՍՏՐԻԱ-ՈՒՆԳԱՐԻԱ

Լրագրները հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում Վիեննայի ռայխսրատի աղմկալի նիստի մասին։ Նիստը բանալով, Նախագահ Ֆետտեր յայտարարեց, որ այսուհետև էլ ինքը պիտի գործադրէ բողոքագրերը գրքեննութեան ենթարկելու համար իւր ունեցած իրաւունքը, բայց կարելոյն չափ չափաւոր կերպով։ Վիճելի դէպքերում անյարմար բողոքագրերը կըզեկուցանուեն դոնփակ նիստում, և պատգամաւորների ժողովը կըվճռի, թէ ինչ ձևով պիտի հրատարակել այդ բողոքագրերը։ Չեխերէն գրուած բողոքագրերի խնդրի մասին իւր որոշումը Նախագահը խոստացաւ հաղորդել նիստի վերջը։ Այս բանին ի պատասխան յայտնի բանուոր-ազգայնական Կլոֆաչ մի ճառ խօսեց չեխերէն, ապացուցանելով թէ ռայխսրատը չի հանգստանալ, մինչև որ Նախագահը չյայտնի

իր որոշումը։ Խօսելիս Կլոֆաչը տաքանում էր հետզհետէ և ձեռքերը շարժելով մօտենում էր նախագահի սեղանին։ Ամբողջ դահլիճը յուզուեց։ Ռումինացի բարոն Վասիլկօ առաջ վազեց և յետ հրեց ճառախօսին, երբ վերջինս պատրաստւում էր թանաքամանը շպրտել նախագահի վրայ։ Կլոֆաչը պատառեց Նիստի ծրագիրը և շպրտեց Վասիլկոյի երեսին։ Երկուսն էլ բռնեցին իրար օձիքից։ Մլադոչեխերը նոյնպէս պատառոտում էին նիստի ծրագրները և կտորտանքը շպրտում էին մինիստրական սեղանի վրայ։ Մինիստրները նստած էին հանգիստ, միայն Կեօրբերը (առաջին մինիստր) վերկացաւ և մի քանի քայլ յետ գնաց։ Գերմանական ազգայնականներն այդ տեսարանն ընդունեցին զանազան բացականչութիւններով։ Պատգամաւոր Իրօ աղաղակեց. «Ասացէք կայսրին, որ պատգամաւորների ժողովը ոչինչ չի անիլ, մինչև որ նախագահը չի դադարիլ դատախազի դեր խաղալուց»։ Չրջանելով չեխերի պահանջին, նախագահն իսկոյն հաղորդում է իւր որոշումը, այն է՝ առաջարկները կընդունուեն միայն գերմաներէն, բնակչութեան բողոքագրերը—ամեն լեզուներով, պատգամաւորների հարցապնդումները—նոյնպէս, բայց կըկարդացուեն գերմաներէն թարգմանութեամբ։ Գերմանական ազգայնականներն ու չեխերն աղմուկ են բարձրացնում, Վօլֆն աղաղակում է. «Քաջութիւն ունեցէք յայտարարելու, որ կըկարդացուեն միայն գերմաներէն հարցապնդումները»։ Մօտ քսան չեխ խմբւում են ամբիոնի մօտ, խօսք պահանջելով։ Փետտերը պատասխանում է, թէ հակաճառութիւններ թոյլ չի տալ իւր որոշման մասին։ Չեխերը սուլից թղթեր են շպրտում։ Աղմուկն ընդհանուր է դառնում։ Մլադոչեխ Գրուբըյ ուզում է խօսել մինիստրական բազկաթոռի վրայ կանգնած։ Նրան ցած են բերում ուրիշ մլադոչեխեր. Փետտերը սախրուած փակում է նիստը։ Պատգամաւորները ցրւում են յուզուած։

—

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ

«Dail Mail»-ին Լօրենցօ Մարկեզից հաղորդում են, որ այնտեղ են հասել պորտուգալական փոխադրական դարձեալ երկու նաւ, որոնք զինուորներ են ափ հանել։ Այդ զինուորները, հաւանաբար, կուղարկուեն դէպի Տրանսվաալի սահմանը, որովհետև մեծ երկիւղ է պատճառում այն հանգամանքը, որ բուրերը սպառնում են ներս խուժել Պորտուգալիայի սահմանը։ Ծովածոցում կանգնած 12 նաւերից միայն մէկն է առևտրական, մնացածները մարտանաւեր են։

—Կոմատի-Պօրտում և Բարբերտոնում բոլոր խանութները փակուած են այժմ, որովհետև իշխանութիւնն իմացել է, որ բուրերի ընտանիքները խանութներից ծածուկ կենսական մթերքներ են եղել առնում և ուղարկում պատերազմի դաշտում կռուող իրենց հայրենակիցներին։

—800 գերի բուրեր պիտի ուղարկուեն Պորտուգալիա պորտուգալական փոխադրական նաւով։

—«Pall-Mall Magazine» ի թղթակիցը մի զրուցատրութիւն է ունեցել նախագահ Կրիւգերի հետ, որն ասել է նրան. «Միթէ ոչ ոք չի կամենում մեր միջնորդը լինել։ Մենք կարող էինք վատ գործել։ Մենք ունեցանք մեր սխալմունքներն ու թուլութիւնները։ Մենք հրատարակեցինք պատերազմը, բայց մեզ ստիպեցին այդ բանն անելու։ Ծամենայն դէպս, Աստուած մեզ կօգնէ, և մենք կըյաղթենք։ Հաւատացէք, որ յաղթութիւնը մեր կողմը կըմնայ։ Ես չգիտեմ, ինչպէս և երբ կըլինի այդ, բայց փաստն անտարակուսելի է։ Անգլիան ամեն ինչ ուզում է զաւթել։ Նա խլեց մեզնից ամեն բան, բայց մեր ազատութիւնը խլել նա չի կարող»։ Կրիւգերն աւելացրել է, թէ այն միջոցին, երբ Անգլիայի պետական մարդիկ իւր հետ բանակցում էին, ճանապարհին էր գտնում մի յայտագիր, որի մէջ ասուած էր, թէ «ոյժը միայն կըյաղթի»։ Ռեֆորմների խնդրի վերաբերմամբ Կրիւգերը նկատել է, թէ Տրանսվաալը մի շաբաթուայ ընթացքում այնքան զիջումներ արաւ, որքան չի արել ոչ մի երկիր 40 տարուայ ընթացքում. Տրանսվաալն այդ կողմից մինչև անգամ չափն անցաւ, բայց անգլիացիներն այդ բանից իսկ օգուտ քաղեցին իբրև առիթից։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԼՕՐԵՆՑՕ ՄԱՐԿԵԶ, 13 փետրուարի.—Պորտուգալական «Բենգուէլլա» նաւը վաղը մեկնում է Լիսաբոն տանելով 633 բուէր-փախստական, որոնք անձնատուր էին եղել պորտուգալացիներին Կոմատի-Պորտի մօտ անցած տարուայ սեպտեմբերին։ Փախստականների մէջ գտնւում են գեներալ Փենաար, հրամանատար Դեւիլլեռ և Կոկ. դրանք բոլորն էլ ամուրի են։ Ամուսնացած բուէրների, նրանց կանանց և երեխաների կըտանի փոխադրական «Զաիրա» շոգենաւը, որը կըմեկնի մօտաւորապէս փետրուարի 21 ին։ Բուէրների ապրուստը նրանց պորտուգալական հողի վրայ գտնուած միջոցին Պորտուգալիայի կառավարութեան վրայ նստում է 80 միլիոն ռէյս Հոլլանդացի հինգ լրտես, որոնք փորձում էին անցնել անգլիական գծերից, բռնուած են սահմանի վրայ և այժմ գտնւում են բանտում։

ԼՕՆԴՕՆ.—Դէաարից հաղորդում են, որ Դեւետն ու Հերցոգը երեկ, նահանջ տալով, անցան երկաթուղու գիծը Կրանկուալի և Օրանժրիւեր կայարանի միջև։ Գետի ջուրը բարձրացել է 5 ֆուտ. Ստացուած տեղեկութիւնների համաձայն, խիստ անձրև է գալիս, որը, ինչպէս կարծում են, թշնամու համար անհնարին է դարձնում գետից անցնելը։ Թշնամուն քայլ առ քայլ հետամուտ է լինում Տօրնիկրաֆտի ձիաւոր զօրքը, որն երեկ դուրս գնաց այստեղից երկաթուղով։ Մ բիշ զանազան զօրախմբեր դուրս գացին նմանապէս Դեւետի դէմ. Դեւետս այսօր գտնւում էր Պետրուսվիլլի մօտ։ Զօրքերը շղթայ են կազմում Օրանժրիւեր կայարանից սկսած մինչև Նորվալսպոնտ։

ՄԱԴՐԻԴ.—Աղկարրագան խնամակալ թագուհուն ներկայացրեց մինիստրութեան հրաժարականը։

ՎԱՆԿՈՒԵՐ.—Կարծում են, որ մարտի վերջը կըլինի արշաւազօրքերի հեռացումը։

ՇԱՆՀԱՅ.—Սինանֆուից ստացուած հասարակ տեղեկութիւններից երևում է, որ Թուան և Չուան պրինցները, հերցոգ Լանը և գեներալ Թունֆուսեանը փախել են Նանսի, որը գտնւում է Սինանֆուից մօտաւորապէս 300 մղոն հեռու դէպի հիւսիս-արևմուտք և Լանջոուֆուից 10 օրուայ ճանապարհ հեռու։

ՆՈՎՈՌՈՍԻՅՍԿ, 14 փետրուարի.—Այսօր ձիւնաբեր փոթորիկ է. շոգենաւերը ծովածոցը չեն մտնում ալեկոծութեան պատճառով. Հեռագրական հաղորդակցութիւնը Բաթումի հետ կըտրուած է։

ԼՕՆԴՕՆ.—Պատգամաւորների ժողով։ Բալֆուրը հաղորդում է, որ ժողովին կառաջարկուի լրացուցիչ գումար յատկացնել աւելի քան մի միլիոն ֆունտ ստեռլինգ նաւատորմղի և երեք միլիոն ֆունտ զօրաբանակի համար։ Ո.դեր ձին վերաբերեալ յետագայ հաճախանութիւնների ժամանակ Դիլլոնն առաջարկում է մտցնել մի ուղղումն, որի մէջ պէտք է դատապարտուի Հարաւային Աֆրիկայում գիւղական տների հրկիզումը և կանանց ու երեխաների արտաքսումը, իբրև քաղաքակիրթ ազգի պատերազմական սովորութիւններին հակառակ միջոցներ։ Այնուհետև ուղղման մէջ ասւում է, որ Տրանսվաալի և Օրանժի հասարակապետութեան կառավարութիւններին պէտք է առաջարկուեն հաշտութեան այնպիսի պայմաններ, որոնք ընդունելի լինեն քաջ պատուաւոր մարդկանց համար։ Բրոդրիկը պատասխանում է, որ Հարաւային Աֆրիկայում ընդհանուր աւերածութիւն չի եղել։ «Բուէրների թողած շատ ագարակներ հրկիզել են քաֆրերը,—ասում է նա,—իսկ միւս դէպքերում այրուած են այն ագարակները, որոնց տէրերը վարուել են իբրև դաւաճան, կամ երբ հարկաւոր է եղել հաղորդակցութեան գծերը պահպանել յարձակումից։ Ինչ վերաբերում է մարդավարի պատերազմելուն, Հարաւային Աֆրիկայում գտնուած զօրքերը խիստ լաւ կարող են դիմանալ ցարդ եղած ամեն մի պատերազմի հետ համեմատութեան (հաւանութիւններ)։ Ինչ վերաբերում է հաշտութեան պայմաններին, կառավարութեանն արդէն յայտնի են այդ պայմանները»։ Դիլլոնի ուղղումն մերժուած է. ուղերձն ընդունուած է։

ՊԵԿԻՆ.—Ջիսինի և Խուչենիի մահուան պատիժը, կայսրի հրամանի և պետութիւնների պահանջի համաձայն, կատարուած է այսօր։

ԲՈՄԲԷՅ.—Վերջին երկու օրուայ ընթացքում քաղաքում մեռաւ 800 հոգի, դրանցից 400 ը—ժանտախտից։

ՀԱՄԲՈՒՐԳ.—Կայսրը մեկնեց Բեռլին։

ՍՈՖԻԱ.—Իշխանն ընդունեց Պետրովի մինիստրութեան հրաժարականը. Նրան յաջորդ դեռ ևս չի նշանակուած։

ՇԱՆՀԱՅ.—Պեկինից չինական աղբիւրից հաղորդում են, որ փետրուարի 11 ին Եունսիենը և Ջաօշուջեաօն անձնասպանութիւն կատարեցին։ Արքունիքը Եուան շիքային հրամայեց Շանդուն ուղարկել մի մեծ զօրք այնտեղի չինական զօրքերին օգնելու, որ Կանսուի ապստամբութիւնը ճնշեն։

ՊԵԿԻՆ.—Այն փաղոցները, որտեղ կատարուեց Ջիսինի և Խուչենիի գլխատումը, բռնուած էին գերմանական, ֆրանսիական և ամերիկեան զօրքերով. Մահապարտ չինացի մանդարինները բերուեցին սայլերով ճափոնական զինուորների պահպանութեամբ. երկուսն էլ հագած էին չինական մանդարինների շոր, բայց առանց իրենց աստիճանի նշանների։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ, 13 փետրուարի

Վեքսէլի կուրսը երեք ամսով		
Լոնդոնի վրայ 10 ֆունտ ստեր. համար.	93,90	
Բեռլինի վրայ 100 մարկի համար.	45,87 1/2	
Պարիզի „ 100 ֆրանկի „	37,35	
Վեքսէլի կուրսը չէկերով.		
Լոնդոնի վրայ.	94,85	
Բեռլինի „	46,30	
Պարիզի „	37,60	
Բորսային դիսկոնտը.	5,6—7,2 1/2	
4% պետական ռենտ.	96 1/4	առկ.
4% ներքին 2, 3, 4 փոխառ. 1891 թ.	—	
4 1/2% ներքին 2, 3, 4 փոխառ. 1893 թ.	99 3/4	ծախ.
4 1/2 ազն. կալ. բանկի գրաւաթղ.	96	առկ.
5% առաջին ներքին խաղարկ. փոխառութ. 1864 թ.	334 1/2	առկ.
5% երկրորդ ներքին խաղարկ. փոխառութ. 1866 թ.	295	առկ.
5% ազն. կալ. բանկի խաղարկ. գրաւաթղթերը.	217	առկ.
3 1/2% պետ. ազն. կալ. բանկի գրաւթ.	89 1/2	գն.
5% ոսկու ռենտը 1884 թ.	—	
Թիֆլիսի քաղ. վարկի ընկ.	93	
Օբլիգացիաները	93	ծախ.
Թիֆլիսի կալ. բանկի 5% գրաւ.	93	ծախ.
Քութայիսի „ „ 6% „	100	ծախ.
„ „ „ 5% „	93	գն.

Բորսայի տրամադրութիւնը խիստ ամուր է։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը)

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը) 7 ժ. 56 ր. (8 ժ. 54 ր.) առ., հասնում է Բագու 9 ժ. (9 ժ. 58 ր.) երեկոյեան։

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է 6 ժ 50 ր. (7 ժ. 48 ր.) առ., Թիֆլիս հասնում է 8 ժ. 12 ր. (9 ժ. 10 ր.) երեկոյեան։

Պօստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 11 ժ. 15 ր. (12 ժ. 13 ր.) երեկոյեան, Թիֆլիս հասնում է 5 ժ. 35 ր. (6 ժ. 33 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) երեկոյեան, Բաթում հասնում է 7 ժ. 10 ր. (8 ժ. 08 ր) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 3 ժ. 5 ր. (4 ժ. 3 ր.) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 8 ժ. 23 ր. (9 ժ. 21 ր.) առ., Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 3 ր. (10 ժ. 1 ր.) առ., Բաթում հասնում է 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) երեկոյեան։

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 56 ր. (9 ժ. 54 ր.) առ., Թիֆլիս հասնում է 8 ժ. 42 ր. (9 ժ. 40 ր.) երեկոյեան։

Թիֆլիսից Բագու մեկնում է 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.) երեկոյեան, Բագու հասնում է 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.) ցերեկուայ։

Պօստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 47 ր. (11 ժ. 45 ր.) երեկոյեան, Թիֆլիս հասնում է 11 ժ. 18 ր. (12 ժ. 16 ր.) առ., Թիֆլիսից Բագու մեկնում է 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.) ցերեկուայ, Բագու հասնում է 7 ժ. (7 ժ. 58 ր.) առ.։

Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) երեկոյեան, հասնում է Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.) առ., Ալեքսանդրապոլ—8 ժ. 27 ր. (9 ժ. 25 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ. 21 ր.) ցերեկուայ։

Կարսից մեկնում է 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.) ցերեկուայ, հասնում է Ալեքսանդրապոլ—7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.) երեկոյեան, Ղարաքիլիսա—11 ժ. (11 ժ. 58 ր.) գիշերուայ, Թիֆլիս—6 ժ. 15 ր. (7 ժ. 13 ր.)։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԵՐԻ
ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ
Լ. Պ. և Ն. Ս. ՕՎԵՐԼՕՆԵՐԸ
Սովորեցնում են բոլոր արդէն յայտնի և նորագոյն պարերը։ Գոլովինսկի պրոսպեկտի անկիւնը, տուն Քարամանեանի № 45 (ցիրկի դիմացը). երեքշաբթի և ուրբաթ օրերը երեկոյեան ժամի 5-6 ը յատկապէս երեխաների դասեր
(496) 25-10

ԹԻՖԼԻՍԻ ՌՈՒՍԻՏՐԱԿԱՆ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
բաժնետէրերն այսու հրաւիրւում են
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
որը տեղի է ունենալու կիրակի, փետրուարի 18-ին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, ճիշտ առաւօտեան ժամը 11 ին պ. պ. բաժնետէրերը պարտաւոր են դահլիճ մտնելիս ներկայացնել իսկական անդորրագրերը։
(550) 2—1

ՀՐԱՒԷՐ
Պատիւ ունիմ այսու հրաւիրելու Կուկիոյ Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցւոյ ծխականներին երրորդ եւ վերջին անգամ, փետրուարի 18 ին, կիրակի օրը, պատարագից յետոյ ժամը 12 1/2-ին առաւօտեան, ընդհանուր ծխական ժողովի անցեալ 1900 թ. հաշիւը և ներկայ 1901 թ. ն ախահաշիւը քննելու և հաստատելու։
Երէցփոխ՝ ինժեներ Ն. Գրիգորեան
(551) 1-1

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ԷՔՍՊԵԴԻՏՈՐ
Պայմաններին ծանօթանալու համար դիմել «Նոր-Դար»-ի վարչութեան։

!ԶԳՈՒՇԱՑԷՔ ԿԵՂԾԻՔՆԵՐԻՑ!
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՈՍԿԵԲՈՐԱԿԻ ԾՈԹՐԻՆԻ
ՕԾԱՌ
ԴԵՂԱԳՈՐԾ
Գ. Փ. ԻՒՐԳԵՆՍԻ
Ոչնչացնում է մուները, արեից այրուածքը, դեղին բծերը, եւնդները, բշտիկները և ազատում է ամեն քրտնելու դէմ։ Առաջարկւում է որպէս արդուզարդի անուշահոտ բարձր որակութեան օճառ
Մի կտորի գինը 50 կ., 1/2 կտորին 30կ.։ Վաճառւում է բոլոր ամենալաւ դեղատներում և դեղատնային խանութներում։
Գլխաւոր պահեստը բոլոր Ռուսիայի համար Գ. Փ. Իւրգենսի մօտ, Մոսկւայում։
(М.) № 192764 24—4

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.
За успѣшныя занятія благодарности
И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ
преподаетъ
Полный курсъ БУХГАЛТЕРІИ
ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:
1) Бухгалтерія (двойная италіянская); 2) Коммерческая ариѳметика 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.
Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ.
Михайловская № 71.
Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.
Занятія съ 1-го числа
Преподов. ведется по собств. сочиненіямъ
480) Годъ занятій одинадцатый 100—22

Дозв. цензурою Тифлисъ, Февраля 15-го дня 1901 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ 387